



ՎԵՂՎԵՔԵՆԵՍ ՏԵՄԻԱԲԻԴԵ

Վիճագ, 28 Նոյեմբեր, 1890:

Ամույս 23ին Հոլանտայի Օրլանստան տան վերջին արու պայազատը Գուլիելմուս Գ 73 տարուան թագաւորը միուս Լայի դղեկին մէջ: Գուլիելմուս Գ, որ էր միանգամայն Արքեղոս Լուքսեմպուրկի, ծնած էր 1817 Փետրուար 19ին, եւ զա՛հ ելած 1849ին: Նախ ամուսնացած էր Վիլհելմէնէրիկ Գուլիելմուս թագաւորին Սոփիա դստեր հետ (1839, Յունիս 18), ըսյց թէ թագաւորին եւ թէ այս ամուսնութենէն ծնած երկու թագաժառանգ Գուլիելմուս եւ Ադելքսանդր իշխանները վաղահաս մեռնելով երկրորդ անգամ ամուսնացաւ թագաւորը 1879 Յունուար 7ին Վալտէրի Գեորգ իշխանին Էմմա դստեր հետ, որով ծնաւ 1880 Օգոստոս 31ին իւր միմիակ դուստը Գուլիելմին, որ ըստ հռչակաւորանի (1848ի) օրինաց է յօնգին ժառանգը. ըսյց առ այժմ՝ իւր անշարհաստիկեան ժամանակ խնամակալութիւնն առաւ իւր մայրը՝ Էմմա թագուհին:

Լուքսեմպուրկի արքեղքսութեան մէջ, որ Հոլանտայի հետ միայն թագաւորին անձօնն կապուած էր, կը զօրէ Սալան օրէնքը, որով պայազատութեան անատակ կըլլայ իսական զիծը. այժմ՝ այս երկրին վարչութիւնն անցաւ ժառանգութեամբ Նասաուի Ատուլփոս Արքեղքին: Ատուլփոս՝ Նասաուի դուքսը, ծնած է 1817 Յուլիս 14ին, եւ 1844ին ամուսնացած է Ռուսսաւանի Միքայէլ աւագիշխանի Եղիսաբեթ դստեր հետ, որ տարի մը վերջը միուս, եւ դուքսը կրկին ամուսնացաւ 1851 Ապրիլ 23ին Անայալ-Տեսաուի Փրեդերիկոս իշխանին Ատելայտ դստեր հետ: Դուքսը 1866 Յունիս 14ին Աշաֆենպուրիկ ծակատէն ետը թողուցած էր իւր գահակաւոր քաղաքն եւ ցայժմ՝ Վիեննա կը բնակէր: Կը կարծուի՝ թէ Նասաուի ժառանգ Յնամմայ Գուլիելմուս իշխանին հետ պիտի ամուսնանայ մանուկ թագուհին, որով Նասաուի տանը ծնօք Լուք-

սեմպուրկ դարձնալ անրաժին եղանակաւ կը կապուի Հոլանտայի հետ:

Նոյեմբերի սկիզբները՝ Ռուսաստանի թագաժառանգ իշխանն իւր արևելքը բրած ժամօրդութեան առնն Վիեննա եկաւ իբրեւ հիւր Աւստրիոյ կայսեր. այս ղէպն առնուեցաւ իբրեւ նշան երկու իշխող տանց մտերմական յարաբերութեանց:

Գերմանիոյ Պաշտօնէից զահերէցն Գարրիկի Խոտալա երթալով տնտեսութիւն մ'ունեցաւ Քրիստիի հետ. տնտեսութեան գլխաւոր նպատակն առնուողական էր:

Փորթուկալի եւ Անգլիոյ ափրիկեան դաշնադրութեան առթիւ եղած գժտութիւնն առ այժմ՝ դադրեցաւ առժամանակեայ (վեց ամիս տուող) դաշնադրութեամբ, որով հիմ՝ դրուեցաւ նոր վերջնական դաշնադրութեան մը:



ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

- ՌՈՒՄԻՆԻԱՆԵՐ**
ՊԱՏՄԱՐԱՆԱԿԱՆ — Պատմական արժէք Ազաթան-գետայ. 273:
ՊԱՏՄԱՐԱՆ — Տիգրանի եւ Պէգման. 276:
ՏԵՂԻՍՏԱՆԻՆ — Ճորիկ վրան եւ չորիք. 280:
ՂԵՋՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ — Հայկականք Զ. 283:
ՄԱՏԵՐՆԻՍՈՍՄԱՆ — Հարկեարի քնարը. 285: — Պատմութիւն Օսմանեան պետութեան. 287: — Քրանսերէն լեզու. 288:
ԱՋԳԱՐԱՆԱԿԱՆ — Ազգային ժողովրդական առանձնը Տրապիզոնի կեանքէն քաղուած. 289:
ԱՐՈՒՆԵՍԻԱՆԵՐ
ԲԺՇԿԱԿԱՆ — Փր. Ռ. Քոն եւ իւր այտուցարդի գիւտ. 290: (Պատկերաւ):
ԱՌԻԻՏԻՏԻԱՆ — Ռուսիոյ արտաձօնութիւնը տարւոյս առաջին վեցամեակին. 295:
ԱՐՈՒՆԵՍՏԱՆԻՆ — Արուստիք զարգացման արգելքներն ի Տաճկաստան. 296:
ՏԵՏԵՍՏԱՆԻՆ — Բերքի եւ ատամանք խնամքը. 296:
ՕՏԼԵՆԵՐ
ՆՈՐԱՆՈՒՐ — Ժալիկ անձրեւնոց. 298: — Մաքսուցոյ մը նոր զետք. 299:
ՏԵՏԵՍՏԱՆԻՆ — Փայտն որդնարարութիւնը պահպանելու միջոց. 299: — Մագնիս ինամքը. 299:
ՄԱՐԱՆՈՒՐ — Անգլիոյ Յոքսեանք. 299: — Մաքսուց. 299:
ՎԵՂՎԵՔԱՆԵՐ ՏԵՄԻԱԲԻԴԵ 300:



ՀՐԱՏԱՐԱՆԻՉ ԵՒ ՊԱՏՄԱՐԱՆԱՏՈՒ ՆՍՐԱՊԻՐ

Է. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆԱ — ՄԻԹԻՐԱՐԵՆԵ ՑՊԱՐԱՆ